«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

30 հունիսի, 2025 թ. N 18 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 35-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.17.26 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է.

1. Պալատի խորհրդի 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 35-Լ որոշմամբ հաստատված Աուդիտորական գործունեության հանձնաժողովի կանոնադրությունը լրացնել 3.1.1. կետով հետևյալ բովանդակությամբ.

«3.1.1. Աուդիտորական գործունեության հանձնաժողովը ձևավորվում է Պալատի խորհրդի յուրաքանչյուր ընտրման պահից եռամսյա ժամկետում: Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախորդ կազմի լիազորությունները շարունակում են գործել մինչև Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նոր կազմի ձևավորման պահը»:

2. Պալատի խորհրդի 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 35-Լ որոշմամբ հաստատված Աուդիտորական գործունեության հանձնաժողովի կանոնադրության 3.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3.3. Աուդիտորական գործունեության հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահը, նշանակվում են Պալատի խորհրդի կողմից»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**